EUROPEAN PUBLIC PROSECUTOR'S OFFICE

RA Prosecutor's Office

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

EUROPEAN PUBLIC PROSECUTOR'S OFFICE

RA Prosecutor's Office

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական դատախազության և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին

Եվրոպական դատախազությունը (ԵԴ), այսուհետ՝ ԵԴ և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, այսուհետ՝ ԳԴ, միասին՝ Կողմեր,

հաշվի առնելով «Եվրոպական դատախազության (ԵԴ) ստեղծման վերաբերյալ ընդլայնված համագործակցության իրականացման մասին» Խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2017/1939 (ԵՄ) կանոնակարգը, այսուհետ՝ ԵԴ կանոնակարգ, և մասնավորապես դրա 99-րդ և 104-րդ հոդվածները,

ընդունելով, որ ԵԴ կանոնակարգի 99(3) հոդվածի համաձայն՝ ԵԴ-ի կողմից կնքվող սույն աշխատանքային պայմանավորվածությունը չի կարող իրավական հիմք հանդիսանալ անձնական տվյալների փոխանցումը թույլատրելու համար և չի կարող պարտադիր իրավական ուժ ունենալ Եվրոպական միության, դրա անդամ պետությունների կամ Հայաստանի Հանրապետության համար,

հաշվի առնելով Կողմերի՝ Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության ֆինանսական շահերը քննչական և դատախազական միջոցներով պաշտպանելու նպատակով սերտ համագործակցություն հաստատելու կամքը,

նպատակ ունենալով միմյանց միջև խթանել համագործակցությունը և տեղեկությունների փոխանակումը՝ Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի դրույթների լիարժեք պահպանմամբ արդյունավետ քննություն և հետապնդում իրականացնելու և ԵՄ բյուջեի նկատմամբ հանցագործություն կատարած բոլոր անձանց անհապաղ պատասխանատվության ենթարկելու համար,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

Հոդված I. Սահմանումները

Սույն աշխատանքային պայմանավորվածության նպատակով՝

ա) «Եվրոպական լիազորված դատախազ» նշանակում է ԵԴ կանոնակարգի 17-րդ և 96(6) հոդվածներում նշված ԵԴ պաշտոնատար անձինք.

բ) «օպերատիվ տեղեկություն» նշանակում է կոնկրետ գործի շրջանակներում փոխանցված տեղեկություններ.

գ) «ոչ օպերատիվ տեղեկություններ» նշանակում է կոնկրետ գործին չառնչվող տեղեկություններ, որոնք ապահովում են VIII հոդվածում սահմանված նպատակների իրագործումը.

դ) «ռազմավարական նշանակության տեղեկություններ» նշանակում է հանցանքների կատարման օրինաչափությունների և միտումների, ինչպես նաև դրանց դեմ պայքարի հաջողված գործելակերպերի վերաբերյալ ոչ օպերատիվ տեղեկություններ:

Հոդված II. Նպատակը

Սույն աշխատանքային պայմանավորվածության (այսուհետ՝ Աշխատանքային պայմանավորվածություն) նպատակն է խթանել Կողմերի միջև համագործակցությունն իրենց իրավասության շրջանակներում քննությունների և քրեական հետապնդումների իրականացման ոլորտում՝ ռազմավարական նշանակության և օպերատիվ տեղեկությունների փոխանակման և համագործակցության այլ ձևերի առնչությամբ՝ համաձայն իրենց համապատասխան իրավական համակարգի, ներառյալ՝ համապատասխանաբար

երկկողմ և բազմակողմ փաստաթղթերը:

Հոդված III. Գործողության շրջանակը

Կողմերը համագործակցում են սույն պայմանավորվածության մեջ նշված բոլոր ոլորտներում՝ իրենց համապատասխան իրավական համակարգի շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ֆինանսական հանցագործություններին:

Հոդված IV. Ապացույցների ձեռքբերման հարցերով համագործակցությունը

Կողմերը միմյանց տրամադրում են առավելագույն աջակցություն՝ ապացույցներ կամ օպերատիվ տեղեկություններ ձեռք բերելու համար՝ համաձայն իրենց գործող իրավական համակարգի և գործող միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ 1959 թվականի ապրիլի 20-ին Ստրասբուրգում կատարված «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» Եվրոպական կոնվենցիայի, որի կողմեր են Հայաստանի Հանրապետությունը և ԵԴ մասնակից անդամ պետությունները:

Հոդված V. Ակտիվների սառեցումը և բռնագրավումը

Կողմերը համագործակցում են իրենց գործող ներպետական և ԵՄ իրավական համակարգին և բազմակողմ իրավական փաստաթղթերին համապատասխան ակտիվների սառեցման, արգելադրման և բռնագրավման ոլորտում:

Հոդված VI. Համատեղ քննչական խմբերը

Կողմերը կարող են համագործակցել իրենց իրավասության շրջանակում գտնվող գործերով համատեղ քննչական խմբեր ստեղծելու հարցերով՝ իրենց գործող իրավական համակարգին և բազմակողմ իրավական փաստաթղթերին համապատասխան: Համատեղ քննչական խմբեր ստեղծելու համար Կողմերը կնքում են առանձին համաձայնագրեր:

Հոդված VII. Հանձնումը

Կողմերն ընդունում են, որ ԵԴ-ի կողմից հետախուզման մեջ գտնվող անձի հանձնման պահանջ ներկայացնելու անհրաժեշտության դեպքում գործը վարող եվրոպական լիազորված դատախազը կարող է դիմել իր անդամ պետության իրավասու մարմնին՝ հանձնման մասին պահանջ ներկայացնելու խնդրանքով՝ համաձայն այդ անդամ պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող միջազգային համաձայնագրերի, մասնավորապես՝ 1957 թվականի դեկտեմբերի 13-ին Փարիզում կատարված՝ «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի կամ փոխադարձության սկզբունքի, ինչպես նաև գործող ներպետական իրավական համակարգի:

Հոդված VIII. Համագործակցության այլ ձևեր

Կողմերը կարող են՝

ա) փոխանցել ռազմավարական նշանակության և այլ ոչ օպերատիվ տեղեկություններ իրենց իրավասությունների շրջանակին պատկանող ոլորտներում: Այս տեղեկությունները չպետք է պարունակեն անձնական տվյալներ

բ) համագործակցել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերով վերապատրաստումներ անցկացնելու շուրջ

գ) միմյանց հրավիրել սեմինարների, աշխատաժողովների,

համաժողովների և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ համանման միջոցառումների

դ) միմյանց տրամադրել լոգիստիկ, տեխնիկական և այլ փոխհամաձայնեցված աջակցություն:

Հոդված IX. Համակարգողները

1. Սույն աշխատանքային պայմանավորվածության շրջանակներում համագործակցությունը խթանելու նպատակով ԳԴ-ի համակարգողն է՝

Կոնկրետ գործերով օպերատիվ հաղորդակցությունների համար՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն

էլ. փոստ՝ EPPO-CSC@prosecutor.am

Այլ հաղորդակցությունների համար՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝

միջազգային հարաբերությունների հարցերով խորհրդական

էլ. փոստ՝ EPPO-OC@prosecutor.am

2. Սույն աշխատանքային պայմանավորվածության շրջանակներում համագործակցությունը խթանելու նպատակով ԵԴ-ի համակարգողն է՝

Կոնկրետ գործերով օպերատիվ հաղորդակցությունների համար՝

Օպերատիվ ստորաբաժանում, IBOA (ԵՄ հաստատություններ, մարմիններ, գերատեսչություններ և գործակալություններ) և

Օպերատիվ համագործակցության թիմ

Լյուքսեմբուրգ, L-1855, Ջոն Ֆ. Քենեդի պողոտա 11

էլ. փոստ՝ eppo-international-cooperation@eppo.europa.eu

Այլ հաղորդակցությունների համար՝

Եվրոպական գլխավոր դատախազի՝ միջազգային հարաբերությունների հարցերով խորհրդական

էլ. փոստ՝ eppo-executiveoffice@eppo.europa.eu

Հոդված X. Հաղորդակցության միջոցները և ուղիները

1. Կողմերը կարող են հաղորդակցվել այնպիսի միջոցներով, որոնց օգնությամբ կարող է կազմվել գրավոր արձանագրություն, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության պաշտպանված միջոցներով:

2. Օպերատիվ գործողությունների առումով Կողմերը կարող են համագործակցել իրենց գործող իրավական համակարգի համաձայն:

3. Կողմերի միջև հաղորդակցությունն իրականացվում է անգլերենով: Փոխադարձ իրավական օգնության վերաբերյալ հարցումներն ուղեկցվում են գործող իրավական փաստաթղթով ընդունելի լեզվով թարգմանությամբ:

Հոդված XI. Տվյալների պաշտպանությունը

1. Սույն աշխատանքային պայմանավորվածության շրջանակներում Կողմերի միջև տեղի չի ունենում անձնական տվյալների փոխանցում, որը կարգավորվում է իրենց համապատասխան իրավական համակարգով, այդ թվում՝ կիրառելի դեպքերում՝ համապատասխան միջազգային համաձայնագրերով:

2. Ցանկացած այլ փոխանցվող տեղեկություն կարգավորվում է իրենց համապատասխան իրավական համակարգով, այդ թվում՝ կիրառելի դեպքերում՝ համապատասխան միջազգային համաձայնագրերով:

3. Փոխանցվող տեղեկությունն օգտագործվում է բացառապես այն նպատակով, որի համար այն տրամադրվել է, և կարող է հիշատակվել որևէ դատական կամ վարչական վարույթի շրջանակներում՝ մյուս Կողմի նախնական գրավոր թույլտվության առկայության դեպքում:

Հոդված XII. Խորհրդակցությունները

Կողմերը խորհրդակցում են միմյանց հետ ցանկացած հարցի շուրջ, որը կարող է հանգեցնել սույն աշխատանքային պայմանավորվածության տարբեր մեկնաբանությունների:

Հոդված XIII. Ծախսերը

Կոնկրետ միջոցառման առնչությամբ այլ բան նախատեսված կամ համաձայնեցված չլինելու դեպքում Կողմերը կրում են իրենց ծախսերը, որոնք առաջանում են սույն աշխատանքային պայմանավորվածության իրականացման ընթացքում:

Հոդված XIV. Փոփոխությունները

Սույն աշխատանքային պայմանավորվածության մեջ կարող են կատարվել փոփոխություններ ցանկացած ժամանակ՝ գրավոր ձևով՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված XV. Աշխատանքային պայմանավորվածության դադարումը

1. Սույն աշխատանքային պայմանավորվածությունը կարող է գրավոր դադարեցվել յուրաքանչյուր Կողմի կողմից՝ երեք ամիս առաջ ներկայացնելով ծանուցում:

2. Դադարման դեպքում Կողմերը կարող են համաձայնության գալ արդեն իսկ միմյանց փոխանցված տեղեկությունների շարունակական օգտագործման և պահպանման վերաբերյալ:

3. Չհակասելով 1-ին պարբերությանը՝ սույն աշխատանքային պայմանավորվածության դադարումը չի ազդում դրա գործողության ժամկետում իրականացված գործողությունների վրա:

Հոդված XVI. Ուժի մեջ մտնելը

Սույն աշխատանքային պայմանավորվածությունն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման ամսաթվից:

Կատարված է 2026 թվականի սեպտեմբերի 11-ին՝ Լյուքսեմբուրգում, երկու բնօրինակից՝ անգլերեն և հայերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Եվրոպական դատախազության կողմից՝	**Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից՝**
Լաուրա Կոդրուտա ԿՈՎԵՇԻ	**Աննա ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**
Եվրոպական գլխավոր դատախազ	**Գլխավոր դատախազ**